ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄՈՎ ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղ. Երեւան 14 հունիսի 2010թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Մ. Թոփուզյանի
Անդամակցությամբ՝ Հ. Դանիելյանի
Ֆ. Թոխյանի

Ուսումնասիրելով քաղաքացի Վալերի Ղարսյանի անհատական դիմումով գործը քննության ընդունելու մասին հարցը,

ՊԱՐԶԵՑ.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ քաղաքացի Վալերի Ղարսյանը 2010թ. հունիսի 7-ին դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով քննության առնել եւ որոշել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին եւ 3-րդ ենթակետերի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը:

Սույն անհատական դիմումով գործի քննությունն ամբողջությամբ ենթակա է մերժման, քանի որ առկա է դիմումի նախնական ուսումնասիրության արդյունքներով հիմնավորված եւ օրենքով սահմանված ներքոհիշյալ հիմքը:

Համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետի՝ դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ սահմանադրական դատարանի որոշման առկայությունը գործի քննության մերժման օրինական հիմք է:

Տվյալ դեպքում, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վիճարկվող դրույթների մասով ընդունված է ՀՀ սահմանադրական դատարանի 2007թ. ապրիլի 9-ի թիվ ՍԴՈ-690 որոշումը, որով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի բոլոր դրույթները ճանաչվել են ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետով եւ ՀՀ սահմանադրական դատարանի կանոնակարգի 26-րդ հոդվածով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

Քաղաքացի Վալերի Ղարսյանի անհատական դիմումով գործի քննությունը մերժել:

Նախագահող՝
Անդամներ

14 հունիսի 2010 թվականի
ՍԴԴԿՈ/2-20